47ՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 2506 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 1912 ԱՊՐԻԼ 25-8

JOURNAL ARMÉNIEN
MANZOUMÉ-I EFKIAR
54 Grand' Rue de Pera, Porte 54
Constantinople

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Ֆ. ԳԱՅՍԷՐԵԱՆ
ՈՐՈՒ ԿՈՒՂՂՈՒԻ ԱՄԷՆ ԳՐՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
Կ. ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ ԱԼԻ ՃԱՏՏԷՍԻ, ԹԻՒ 54
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՐԻՂՂՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐ ԵՎ ՉԵՆ ՏՐՈՒԻՐ

Մանկական Էֆքեար

ԱԶԱՏԱԿԱՆ ԱՆԿԱԽ ՕՐԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

منظومهٔ افکار ارمنیجه یومی غزته
صاحب امتیاز اوحانس فرید
اداره‌خانه‌سی باب عالی جاده‌سنده نومرو ٥٤

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿԱՆԽԻԿ	ՏԱՐԿ.	ՎԵՑՄՍ.	ԵՌԱՄՍՑ.
Պոլսոյ համար	80 Ղ.	45	25 Ղ.
Գաւառներու համար	80 „	45	25 „
Արտասահմանի „	25 Ֆր.	14	8 Ֆր.

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
Մէկ անգամի համար տողը 5 ղրշ., մէկէ աւելի ծանուցմանց համար մասնաւոր պայմաններ։
Մ.

10 ՓԱՐԱ — ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՕՐ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ — 10 ՓԱՐԱ

ՀԱՅ ՄՏՔԻ ՏՕՆԸ

«ԳՐԱԿԱՆ ՖՕՆՏ»Ը

ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Պ. ԱՐՇԱԿ ՁՕՊԱՆԵԱՆԻ ԿՈՂՄԷ

Բ.

Ուրիշ և նոյնքան կարեւոր հարց մը՝ ընտրութիւնն է այն գործադիր մարմնոյն, որ պիտի կազմակերպէ «Գրական Ֆոնտ»ի հիմնարկութիւնը և հաւաքուած գումարին գործածումը պիտի ղեկավարէ։

Ամենամեծ գումարը՝ անյարմար մարդոց ձեռքը՝ կրնայ ամուլ մնալ, կամ տալ ընդհանրապէս օգուտ, մերթ նոյն իսկ վնասաբեր դառնալ։

Օրինակի համար, Կովկասի Հայոց Հրատարակչականը մօտ երեք տարի է որ վերահաստատուած է, բայց Շիրվանզատեի «Արտիսին» երկրորդ տպագրութենէն ու քանի մը մասնաւոր թարգմանութիւններէ զատ՝ ոչինչ տուաւ, ոչ մէկ լուրջ նորութիւն, ոչ մէկ ինքնատիպ գործ։ Ատոր պատճառը միայն դրամ քիչ ունենալը չէ։ այդ քիչով կարելի էր աւելի կեանք ցոյց տալ, աւելի խուզարկու, նոր բաներ, ստեղծագործ, ձեռներէց ոգի երեւան բերել։ Չեմ գիտեր ո՞վ են այն անձերը որ այժմ կը ղեկավարեն Հրատարակչականը, բայց արդիւնքէն դատելով՝ ստիպուած եմ ենթադրել որ գործին պահանջած բոլոր յատկութիւններն ունեցող անձեր չեն։

Բայց կայ ուրիշ՝ աւելի բնորոշ՝ օրինակ մը, զոր պէտք է յիշատակեմ հոս։ Ղուկասեան եղբայրները բաւական կարեւոր գումար մը տրամադրած են հայերէն լեզուով հրատարակութեանց համար։ ահա՛ հայ հարուստներ որ ինքնաբերաբար ընդառաջ են եկեր մեր գրականութեան նիւթապէս աջակցելու պէտքին և գումար մը յատկացուցեր են այդ նպատակին։ սիրա հազուագիւտ երեւոյթ մըն է մեր մէջ և մեծապէս գովելի, բայց եկէք տեսէք որ այդ գումարին գործածութիւնը յանձնուած է անյարմար անձերու որով չի կրնար տալ այն բոլոր օգուտը զոր կարող էր տալ եթէ ղեկավարութիւնը լաւագոյն ձեռքերու մէջ ըլլար։ Այդ պարտները քանի մը տարի առաջ կ'որոշեն Ցովհաննէս Թումանեանի բանաստեղծութեանց հաւաքածոն հրատարակել։ պատուական որոշում մը, բայց որուն գործադրութեան մէջ երեւան կը բերեն անպատկառ և աննեղութիւն անբարտաւան ոգի մը։ այդ պարտները, որոնք ամէնքն ալ գրասէր երկրաչափներ, բժիշկներ կամ փաստաբաններ են, բայց ո՛չ գրողներ, կը կարծեն իրաւունք ունենալ Թումանեանի պէս հոյակապ բանաստեղծի մը գրութիւնները «սրբագրելու» (իրաւունք զոր դարձեալ պիտի չունենային նոյն իսկ եթէ գրողներ ըլլային), ամբողջ առներ կը ջնջեն, տողեր, բառեր ուզածնուն պէս կը փոխեն, և ասիկա կ'ընեն առանց իսկ յայտնելու հեղինակին։ Բաղու առիթ ունեցայ այդ պարտներէն մին տեսնելու, և ըսի իրեն որ անհնարանալի և անընդունելի կը դտնէի իրենց այդ վարմունքը։ անիկա ամենայն պաղարիւնութեամբ պատասխանեց թէ, Թումանեան տաղանդաւոր մարդ է, բայց զարգացում չունի, ուստի և կարիք կայ իր գրուածքները «սրբագրելու»։ ես կը կարծեմ որ այսպիսի այլանդակ ընթացք ո և է տեղ ո և է ատեն չէ տեսնուած, այն ալ գործուած Թումանեանի պէս զմայլելի բանաստեղծի մը նկատմամբ, որ ոչ միայն մեր ամենէն հզօր և ինքնատիպ քերթողական խառնուածքներէն մին է, այլ և շատ աւելի զարգացած, գիտակից և ճարտար գրող է, քան ինչ որ Բաղուի երկրաչափները կը կարծէին։

Այս օրինակները մէջ բերի, եղրակացնելու համար որ, եթէ նոր հիմնուելիք «Գրական Ֆոնտ»ին ղեկավարները Թիֆլիզի Հրատարակչական վարիչներուն պէս թոյլ կամ Բաղուի «ամաթէօր»ներուն պէս ինքնահաւան և անպատկառ պիտի ըլլան, լաւագոյն է ոչ յոբելեան տնել, ոչ ալ «Ֆոնտ» հիմնել և թողուլ որ մեր գրողները՝ ինչպէս մինչեւ ցարդ՝ շարունակեն «իրենց իւղին մէջ տապկուիլ»։

Անիմաստ պիտի ըլլար անշուշտ այս յուսահատական եզրակացութեան վրայ կանգ առնել։ Անհրաժեշտ է ուրեմն «գրական ֆոնտ»ին գործադրող մարմինը ընտրուած ժամանակ, ուշադրութիւն ընել որ անոր անդամներն ըլլան ոչ թէ ամաթէօրներ, այլ գրականութենէ իսկապէս, ներքնապէս հասկցող մարդիկ։ «Ֆոնտ»ին նիւթական վարչութիւնը թող յանձնուի գրասէր «գործի մարդոց», որովհետեւ զուտ մտաւորականներն ընդհանրապէս վարչական ձիրք չունին. բայց գրական գործերու և անձերու գնահատումը, անհրաժեշտ է որ միմիայն գրական մարդոցմէ կազմուած մարմնոյ մը յանձնուի։ Ցիրանական Ակադեմիան և Կոնքուրեան Ակադեմիան «Գրական ֆոնտ»ի նպատակն ունեցող մեծ հաստատութիւններ են. առաջինը իր տրամադրութեան տակ ունի տարեցոյց գումարներ այլ եւ այլ ճիւղի գրական աշխատութիւններ մրցանակով վարձատրելու համար սահմանուած, երկրորդը Կոնքուրի թողած գրամագլխուն տոկոսով ցկեանս որոշ ամսական մը կը յատկացնէ տասը տաղանդաւոր գրագէտներու որ Ակադեմիային անդամ կ'անուանուին և տարին անդամ մը արձակ գրականութեան ամենէն ինքնատիպ գործին 5000 ֆրանքի մրցանակ մը կը շնորհէ։ Այդ երկու հաստատութեանց եւ բոլոր անդամները գրական մարդիկ են. առաջնոյն մէջ ճիւտ է որ զուտ գրագէտներու մեծամասնութեան հետ կան նաև նշանաւոր եկեղեցականներ, փաստաբաններ, զինուորականներ, դիւանագէտներ, բայց ասոնք իսկ պէտք է միեւնոյն ատեն գրահմուտ անձեր ըլլան, գրական փորձեր ալ արտադրած ըլլան, իսկ մրցանակներու բաշխումը որոշելու գործը ակադեմիան միշտ կը յանձնէ իր մէջէն մասնախումբի մը որ կը կազմուի զուտ գրական անձերէ (*)։ Գալով Կոնքուրեան Ակադեմիային, սահմանուած է լաւագոյն Թարգմանութեանց համար (իսկ երբ՝ հինգ վեց տարի առած Շերվանզատէի խորհրդով դիմեցի Բաղուի Ազգային հրատարակչական Մասնախումբին, առաջարկելով որ հանձին հրատարակել իմ բանաստեղծութեանցս հաւաքածոն, այդ կոկոզավիզ երկրաչափները առանց իսկ գոնէ ռուսահայ հեղինակաւոր գրագէտի մը, բանաստեղծի մը, քննադատի մը կարծիքն առնելու, վճռեցին մերժել իմ խնդիրքս)։

Օր. համար երբ ես իմ Chants populairs arméniens գիրքս ներկայացուցի Ցիրանական Ակադեմիային, անոր քննութիւնը յանձնուեցաւ Մէղիէրի, Ֆակէի, Լէմէթրի, երեքն ալ ծանօթ, հեղինակաւոր գրական քննադատներ, և այդպէս վճռուեցաւ չնորհել Լանկլուա մրցանակը որ Ակադեմիան այդպիսի նուիրատուութիւններ չառ մեծ քանակութեամբ ունի ստացած. անդամ մը որ այդ «սովորութիւնը» մտնէ մեր մէջ եւս, մեր հարուստներն ալ անշուշտ հետաղհետէ պիտի վարժուին իրենց անունը յաւերժացնելու համար զբրական մրցանակներ հիմնել։

«Գրական Ֆոնտը» պէտք է օգնութեան հասնի բազմաստատակ հայ գրագէտներուն իրենց նեղութեան կամ հիւանդութեան օրերուն։ Երբ հայ բազմարդիւն գրագէտ մը կը վախճանի և իր կինը ու զաւակները թշուառութեան մէջ կը մնան, «Ֆոնտը» պէտք է զբաղի անոնց վիճակով, ըստ կարելւոյն անոնց օգնէ ու հոգածու ըլլայ։ Ամէն անգամ որ հայ գրագէտի մը իրաւունքները բանաբարուած են, «Ֆոնտը» իր բարոյական ու նիւթական միջոցներով պէտք է ճիգ թափէ որ անոր իրաւունքները յարգուին։

«Ֆոնտ»ը կարող է որոշ աշխատութիւններ առաջարկել (թարգմանութիւն կամ հեղինակութիւն) այս կամ այն հեղինակաւոր գրագէտին, որոշ վճարքով։

Մեծ տաղանդ ցոյց տուող սկսեալներ երբ յայտնուին, «Ֆոնտը» պէտք է անոնց նիւթապէս օգնէ՝ Եւրոպա երթալու և իրենց գրական զարգացումը ամբողջացնելու համար։

Այս կարգի օժանդակութիւններ՝ դեռ այլ և այլ ուրիշ ձեւերով, «Ֆոնտը» կարող է և պարտաւոր է բերել հայ գրական գործիչներուն։ Միայն թէ, այս բոլորն ընելով հանդերձ՝ «Ֆոնտը» բարեգործական ընկերութեան մը բնոյթը ունենալու չէ երբեք. պէտք է միշտ իր պարարքները և գործունութիւնները «գրականութեան օգնելու», որոշ գոյն ու ձգտումն ունենան և աղքատախնամ ձեռնարկներուն նպատակը չստանան։

ԱՐՇԱԿ ՁՕՊԱՆԵԱՆ

ՔԻՒՐՏ ԱՒԱՏԱՊԵՏ ՄԸ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՒ ՄԸ ՍԲԲԱԶԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

ՀՐԱՇԱԳՈՐԾ ԵՐԱԶ ՄԸ

ՔՈՒՐԴԷ ԻՆՁՊԼԷՆ ԵՏ ԿՈՒՏՍԳ ԴՈՂՈՆԸ

Արաբկիրի հիւսիսային արեւելեան կողմը, զրեթէ վեց ժամ հեռաւորութեամբ, երկու բլրակներու մէջ, աւելի քան հիւսիսային ըլլակին ստորոտը կը գտնուի, Բուշնան հայաբնակ գիւղը, որ կը բաղկանայ 30 աղքատիկ տնակներէ։

Ունի խարխուլ եկեղեցի մը, շուրջ երեսուն և հինգ տարիներէ ի վեր փլատակ մնացած, միայն երեք քարաշէն պարիսպներով կանգնուն. յարակից է նաեւ գիւղին Ս. Մեսրոպեան միայարկ վարժարանը, հին գիւղական ոճով շինուած, ուր կը յաճախեն երեսուն չափ երկսեռ ուսանողներ, որոնցմէ է՛ն մեծը գրեթէ տասներկու տարեկան է. հոն է ատաւաւիկ, որ Բուշնացին միեւնոյն ատեն կը կատարէ իր եկեղեցական պաշտամունքը։ Ժողովուրդը չի կրնար նոր շինք կառուցանել, և եկեղեցին ու դպրոցը նոյնացուցեր է այսպէս։ Ինքզինքը երջանիկ պիտի զգայ Բուշնացին, եթէ Ս. Պատրիարքը բարեհաճի տարիներէ ի վեր քայքայուած ու փլատակ մնացած եկեղեցիին վերանորոգման հոգ տանիլ։ Չենք գիտեր թէ մօտերս ալ Հայաստան ղրկուելիք քշնիչ յանձնաժողովը պիտի համի՞ արդեօք մեր այս խարխուլ սրբավայրն ալ արձանագրել իր քննութեան առարկայ դառնալիք աւերակ սրբավայրերու շարքին մէջ։

Բուշնացին ընդհանրապէս կը զբաղի երկրագործութեամբ, մշակութեամբ, և մասամբ ալ չերեսաբուծութեամբ։ Ապրուստի պայմանները սակայն այնքան նեղ են որ յաճախ յուսահատ, կը հարկադրուի պանդխտել Պրուսա, Կ. Պոլիս, Ամերիկա կամ այլուր։ Այսօր Բուշնայի ժողովուրդին երեք չորրորդը օտար աստղերու տակ, պանդուխտներու անկիւնը, և թերեւս հիւանդանոցներու մէջ կը հիւծին, կ'ոգբան, կը տքնին, զուրկ և հեռու իրենց սիրելիներէն։

Գիւղը շրջապատուած է ծառերով, այգիներով և պտղատու պարտէզներով։ Ունի բաւական օդ, առատ և զով ջուր, և ասա այս է արդէն Բուշնացիին միակ պարծանքն ու մխիթարութիւնը։ Մէկ ու կէս ժամ անդին, դէպի գիւղին արեւելեան կողմը Եփրատն է, որ կը վազէ սարշաւ, կարծես հէ՞դ գիւղացիին հոգերն ու վիշտերը, ցաւն ու զոհը, և վերջապէս իր սիրելիներուն կարօտն ու պապակը ունենալով իր հոսանքներուն մէջ, կը տանի խառնելու Տիգրիսին։

Գրեթէ տասնըվեց տարի առաջ, 1896ի ընդհանուր հայկական կոտորածին էր որ մէկ քահանային հետ, գիւղացին իր միակ հոգեւոր հայրը՝ Տ. Ստեփաննոս քահանայ Հանէսեանը, զոհ տուաւ Համիտի բռնակալութեան, իսլամութիւնը չընդունելով։ Անկէ մինչեւ այսօր անհոմիւ կը մնայ գիւղը։ Կիրակի օր մըն էր երբ յիշեալ քահանան կը պատարագէր, և խեղճ ժողովուրդը ջերմեռանդութեամբ կ'աղօթէր, չէր գիտեր թէ ինչեր կը սարքուին իրենց համար։ Ցանկարծ դուրսը, տուներու մէջ, փողոցներու անցքերուն վրայ, հարսերու ճիչերը, մանուկներու լացն ու աղաղակը կուգան վրդովել, թունդ հանել հաւատացեալներուն սրտերը, որոնք խուճապի կը մատնուին։ Վայրկեան մը չանցած ահա ջարդարարներու ամբոխը կը խուժէ եկեղեցիին ներս, կը ջարդէ ու կը կողոպտէ։ Եկեղեցիին նուիրական զոյքերն ալ կը յափշտակուին, կը թալլուին ամբոխին կողմէ։ Ա՛լ երեւակայեցէք տագնապը։ Հաշմտեան բռնապետութեան և դժբախտութեան թուականէն ի վեր լսեցինք որ մեր եկեղեցիին սրբազան առարկաներէն ոսկեզօծ սկիհը, թաւշապատ և կիսարծաթապատ Իւղաբերից աւետարանը, և խաչ մը կը գտնուին Տէրսիմի Ղարիչար գիւղի քիւրտ աստապետ Բիւլիւկ աղայի քով։ Ա՛լ ո՛վ կը յուսար թէ թալլուած և քիւրտերու ձեռքը անցած զոյք մը կարելի կ'ըլլայ վերստանալ, մանաւանդ որ երկար տարիներ անցած էին։ Քանի քանի անգամ գիւղին կողմէ դիմում եղած է եւ պահանջելու զանոնք, տեղւոյն ազգայնոց կողմէ, նոյն իսկ դրամական հատուցման խոստումով, սակայն դժբախտաբար չյաջողելով, ձեռնունայն ետ վերադարձած են։

Անգամ մը նոյն իսկ Զմկածագի Բազատն գիւղի քահանան կ'ուզէ դրամով գնել այդ առարկաները իրենց գիւղի եկեղեցիին համար, սակայն դարձեալ կը մերժուի։ Բիւլիւկ աղան այն օրէն ի վեր ջղայնացած, խելագար մը եղած էր կարծես։ այդ տարիներու շրջանին մէջ ամէն օր, ամէն ժամ գողցուած սկիհը կը հանէ մտուկէն, կը դնէ առջեւը, ու կը սկսի իր սովորական աղօթքը ընել, հաւատալով թէ, այն է միայն որ պիտի փրկէ զինքը։ աղօթելէ յետոյ դարձեալ կը դնէ զայն մտուկը, կը կղպէ, ու բանալին իր սիրելիներէն և ոչ մէկուն վստահելով կը դնէ գրպանը։

Դիշերին մէկը, յիշեալ Բիւլիւք աղան երազ մը կը տեսնէ, որուն մէջ կ'ըսուի թէ «Քու առողջութիւնդ ու ապահովագրվերստանալու համար քու մօտդ գտնուող եկեղեցապատկան առարկաները պիտի տանիս անմամբ յանձնես այն աղքատիկ եկեղեցիին, ուրկէ առիր»։ Ցանկարծ, ահաբեկութեամբ և որոտընդոստ կ'արթննայ խոր քունէն, կը պատմէ տեսած երազը, և անմիջապէս կ'ուխտէ առանց ժամանակ կորսնցնելու վերոյիշեալ առարկաները վերադարձնել Բուշնայի եկեղեցիին։

Հայրենիքէն քաղած տեղեկութեանցս համաձայն, ներկայ տարւոյս մարտ 23ի աւուր ուրբաթ օրը, յիշեալ Ղատիչար գիւղի Բիւլիւք աղան, առաջնորդութեամբ Զմկածագի Իւզպէկ գիւղի Պ. Մարգիսին, և ընկերակցութեամբ իր կրտսեր որդւոյն ու ծառային, հեծեալ կը հասնի Բուշնան, նուիրական գոյքերն Սկիհը, Իւղաբերից Աւետարանը և խաչ մը միասին բերելով, ըստ իր ուխտին։ Անձամբ կ'այցելէ եկեղեցին, գլխարկը հանելով կը համբուրէ Ս. Սեղանը, կ'երկրպագէ ջերմեռանդութեամբ, և բաղկատարած, պահ մը հիացած կը դիտէ Աստուածածնի պատկերը ու գոյքերը այնտեղ ձգելէ վերջ, կրկին համբոյրներով, երկրպագութեամբ ու ծնրադրութեամբ եկեղեցիէն դուրս կ'ելլէ։ Ինք որ երեսնի դրամի փոխարէն իսկ չէր վերադարձուցած զանոնք, հիմա առանց փոխարինութիւն պահանջելու կը յանձնէ այսպէս։

Հրաշալին հոն է որ, — ինչպէս յայտնուած էր իր երազին մէջ, — կը բուժուի իր ջղայնութենէն զոր ոչինչ կրցած էր զարմանալի Գալով Բուշնացիներուն, կը գուշակէք անշուշտ իրենց ուրախութիւնը։ Լաւ մը կը մեծարեն գիւղի եկած քուրդը, որդին ու Պ. Մարգիսը։ Բիւլիւք աղա, նոյն գիւղերը հիւր մնալով, յաջորդ օրը կը մեկնի երգերով, «Նաչաուն հիւրիթ»ով և ծափերու չառաչիւններու մէջ, զոհ ու երջանիկ։

Արդ՝ որովհետեւ մեր Բուշնայի պանդուխտ հասարակութիւնը, որ այժմ մեծամասնութեամբ Պրուսա կը գտնուի ու չի կրնար ուրիշ միջոցաւ իր սրտին ուրախութեան արտայայտութիւնը յայտնել անոր, իմ միջոցաւս հրապարակային շնորհակալութեամբ կը փոխարինէ յիշեալ Բիւլիւք աղայի գովելի վարմունքը։ Մենք կը սպասենք որ ուրիշ աւատապետներ ալ, ուխտեն ինքնաբերաբար յանձնել մեզ ու մեզ նման խեղճ գիւղացիներու՝ ամէն գոյք ու հողային կալուածք, որոնց տարիներէ ի վեր տիրապետած են սոսկ իրենց բռնակալութեամբ։ Բաղցր է մեզ

«ՄԱՆԶՈՒՄԷ»Ի ԹԵՐԹՕՆԸ (14)

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ԴԷՊԻ ԿԱԽԱՂԱՆ

(ՎԷՊ ԱԶԳԱՑԻՆ—ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

Զ.

ԾՈՒՂԱԿԸ

Մէկ երկու ժամ առաջ, Պէպէքի հանդարտ գիւղը ընդոստ արթնցած էր իրեն համար բոլորովին անսովոր աղմուկէ մը։ Պոլսոյ և արուարձաններու բնակչութեան համար այդ տեսակ ժխորներ ա՛նքան սովորական բաներ էին որ մարդիկ, ոչ իսկ կը հետաքրքրուէին թէ ինչ է։ արդէն խելացութիւն ալ չէր առանկ առիթներու մէջ ինքզինքը ցուցադրելը։ Բայց Պէպէք՝ մասամբ եւրոպական կայք էր, և այդ թուականին՝ որ Թուրքիոյ պատմութեան ամենէն փորձանաւոր շրջաններէն մէկն է, արդէն իսկ վարժուած էին տարբեր աչքով նայիլ «տարականներու։ Այս պատճառաւ՝ Պէպէք հանդարտ կը մնար ընդհանրապէս։

Բայց ահա ճիշդ այդ անողորմութիւնն էր որ կը խանգարուէր նոյն գիշերը, և բոլորովին վրդովիչ կերպով մը։

Քանի մը հետաքրքիրներ՝ որոնք իրենց սարսափին յաղթելով համարձակեր էին մէկ կողմ առնելու պատուհաններու վարագոյրը և փողոցը դիտելու, տեսեր էին բազմաթիւ Սալմա նէֆէրներ, — ժամանակին ոստիկանները, — որոնք խումբ խումբ կը խուժէին դէպի գիւղին բարձունքը, առաջնորդութեամբ իրենց պետերուն, Սալմա Պաչ-Զուգատարներու։ Յետոյ անոնց յաջորդած էր զաղոնի ոստիկաններու, Գուլ Օղլուներու զուգարտակ մը, որուն ետեւէն կու գային Պօսթանճիին տեղակալը՝ Պաշ-Նէօպէթճին և երկու Հաւէքի աղաներ՝ պալատական լրաբերներ։ Արդէն իսկ աղմկարար այս մարդիկը, դրեթէ խուճապային ճապարանքի մը մէջ էին, և այդ էր պատճառը որ իրենց անցքը ահագին ժխոր կը հանէր։

Ոչ ոք կրցաւ հասկնալ թէ ո՛ւր կ'երթան այդպէս գիշեր ատեն և թէ ի՞նչ է իրենց ճապարանքին պատճառը։ Դէպի Հիսար ուղղուած էին, և ամէն մարդ այնպէս մտածեց թէ նորէն խռովութիւն ծագած է Եսայանքներու մէջ, որոնք այն ատենուան ամենէն ահարկու անկանոն զինուորներն էին, և զորս Հիսարի բերդին ու Վոսփորի միւս ամրոցներուն պահապան կարգած էին՝ պարզապէս Պոլսէն հեռացուցած ըլլալու համար խռովութեան և անկարգութեան այդ սերմերը։

Այս մտածումով, Պէպէքցիք նորէն իրենց անկողինները վերադարձան, մինչդեռ ոստիկաններու հանած աղմուկին յետին արձագանգները հետզհետէ կը նուազէին։ Վայրկեան մը վերջ՝ գիւղը բոլորովին վերստացած էր իր հանդարտութիւնը։

Այն բարձունքը ուրկէ անհետացան ոստիկանները, գիւղէն մօտաւորապէս տասը վայրկեան հեռուն կը գտնուէր։ Հողի լեզուակ մըն էր, տեսակ մը մանրաղիտական հրուանդան, որ դէպի ծով կ'երկարէր, կարծես վարանքով, և որուն վրայ՝ ընդարձակ պարտէզով մը շրջապատուած խոշոր ապարանք մը կը բարձրանար։ Եւ այդ գիրքին վրայէն ապարանքը կ'ելլէր իր երկու կողմերուն վրայ միանգամայն։ Մէկ կողմը՝ Պէպէքի գիւղն էր որ իր դէպ ի ներքեւ կէս մը թրքական շէնքերով խառնափնդոր տեսարան մը կը ձեւացնէր, իսկ միւս կողմը Ժեռուտ ու վտանգաւոր ծովեզերքը որ դէպի Բումէլի Հիսարի գերազանցոց կ'երկարէր, և որուն վրայ ոչ մէկ շէնք կար այդ միջոցին։

Երբ տակաւին ոստիկանները չէին յայտնուած, այդ ապարանքին վերնայարկի պատուհաններէն մէկուն ետեւն աղօտ լոյս մը կը պլպար։ Պատուհանը ծովուն վրայ կը նայէր, և ատեն ատեն՝ մարդկային գլուխ մը վարագոյրներուն բացուածքէն կուգար ծովը կը դիտէր անհանգստութեամբ յորդող աչքերով, մէկ քանի վայրկեան կը փորձէր Վոսփորը ծածկող անթափանցելի մութը խուզարկել, ու կ'անհետանար անհամբերութեան շարժումով մը, պահ մը վերջ նորէն յայտնուելու, նորէն նոյն ապարդիւն փորձը ընելու համար։

Ցայսմէն էր որ այդ մարդը ամբողջ գիշերը հսկած էր պատուհանին ետեւն, սպասելով բանի մը, թերեւս նաւակի մը որ չէր գար։

Եւ ահա յանկարծ՝ ոստիկաններուն ծանօթ աղմուկը փրթած էր վարէն, գիւղին մէջէն։ Դէմքը դարձեալ յայտնուած էր վարագոյրներուն բացուածքէն, պահ մը ականջ տուած էր զարհուրելի ժխորին, և դէպի ծովը յետին ակնարկ մը նետելէ վերջ անհետացած էր ճապարանքով։ Միեւնոյն րոպէին մարած էր նաև այն կանթեղը որ այդ պատուհանը կը լուսաւորէր, և ապարանքը կատարեալ մթութեան մէջ թաղուած էր, երբ ոստիկաններու խումբերը անոր առջեւէն անցնելով, բարձունքն ի վար՝ դէպի Բումէլի Հիսար կ'իջնէին։

Հինգ վա՛ր ոկեան վերջ՝ մինչդեռ լուութիւնը կրկին տիրած էր բարձունքին վրայ, ապարանքին դուռը կամացուկ մը բացուեցաւ, և մարդ մը ելաւ անկէ դուրս, յամրաբար, ամենամեծ զգուշութեամբ։ Մօտաւորապէս երեսուն տարեկան բարձրահասակ երիտասարդ մըն էր, վայելչօրէն շքուած ժամանակին պէյդպատէներուն յատուկ տարազով, թէև առանց վերարկուի և բաց գլխով։ Մէջքի մետաքսեայ գօտին՝ դաշոյնի մը արծաթեայ երանակալը դուրս ինկած կը շողար մութին մէջ։ Երիտասարդը միեւնոյն զգուշութեամբ գոցեց դուռը, և մինոց մը ուշադրութեամբ իր շուրջը զննելէ վերջ, մէկ քանի ոստումով կարաց անցաւ այն պզտիկ հեռաւորութիւնը որ զինքը կը բաժնէր բլրակին ամենաբարձր կատարէն։ Յետոյ, այնտեղ երեսի վրայ պառկած, սկսաւ վար նայիլ։

Բարձունքին ստորոտը ընդարձակ խոպան դետին մը փռուած էր, որուն տարածութեան չափը դժուար էր որոշել մութին մէջ։ Այնտեղ խմբուած էին պահ մը առաջ Պէպէքցիներուն քունը վրդովող ոստիկանները, և երիտասարդը որ զանոնք կը լրտեսէր վերէն, դժուարութիւն չքաշեց հասկնալու համար թէ աւելի հեռուն երթալու միտք չունին, և թէ խորհուրդ գումարած են ստանալու գործողութեան մը համար։ Անհնարելի դող մը ցնցեց զինքը, և այքերը բռնաբար տարուեցան դէպի այն ծովափորչը որուն կը յանգէր այդ տափաստանը, և որ մինչև Հիսար երկարող անմարձենայի ու վտանգաւոր ծովեզերքին երկայնքը՝ միակ մատչելի վայրն էր նաւակի մը համար։ Ժայռերը այնտեղ ալ առատ էին ու խոշոր, և նոյն իսկ եղերքէն մէկ քանի զրկաչափ հեռուները կատար ցցած էին ծովուն մէջ, ինչ որ բոլորովին վտանգաւոր կը դարձնէր ծովախորչին մուտքը գիշեր ժամանակ, բայց վերջապէս խիտ չէին, և վարժ ու անոնց դիրքին ծանօթ նաւավար մը կրնար առանց նաւակը խորտակելու ծովեզերքին մօտենալ։

Երիտասարդը գլուխը դարձուց դէպի ծովը, մէկ քանի վայրկեան նայուածքը պատցուց ամէն ուղղութեամբ, բայց չկրցաւ ոչինչ նշմարել և նորէն իր ուշադրութիւնը կեդրոնացուց տափաստանին վրայ, ուր խորհուրդը վերջացած ըլլալ կը թուէր։

(Շարունակելի)

ԱՅԺՄ ԶԱՅՆ ՀԱՅՐԱՊԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՍԻՆ

ԳՎՔՈՒՆՔ

Գրական-գեղարվեստական հանդես

Հրատարակվում է Ամիսը մեկ անգամ

Գին 1 ռուբլի

ԱՌԱՋԻՆ ԳԼԽԱՎՈՐ

ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամեն մի մարդ, ինչպես գիտենք, ունի մի անգամ մեռնելու բախտը։ Ամեն մի մարդ, ինչպես գիտենք, ունի մի անգամ ապրելու բախտը։ Ամեն մի մարդ, ինչպես գիտենք, ունի մի անգամ սիրելու բախտը։ Ամեն մի մարդ, ինչպես գիտենք, ունի մի անգամ ատելու բախտը։ Ամեն մի մարդ, ինչպես գիտենք, ունի մի անգամ հավատալու բախտը։ Ամեն մի մարդ, ինչպես գիտենք, ունի մի անգամ կասկածելու բախտը։ Ամեն մի մարդ, ինչպես գիտենք, ունի մի անգամ հաղթելու բախտը։ Ամեն մի մարդ, ինչպես գիտենք, ունի մի անգամ պարտվելու բախտը։ Ամեն մի մարդ, ինչպես գիտենք, ունի մի անգամ ...

ԱՌԱՋԻՆ ԷՋ

ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամեն մի մարդ, ինչպես գիտենք, ունի մի անգամ մեռնելու բախտը։ Ամեն մի մարդ, ինչպես գիտենք, ունի մի անգամ ապրելու բախտը։ Ամեն մի մարդ, ինչպես գիտենք, ունի մի անգամ սիրելու բախտը։ Ամեն մի մարդ, ինչպես գիտենք, ունի մի անգամ ատելու բախտը։ Ամեն մի մարդ, ինչպես գիտենք, ունի մի անգամ հավատալու բախտը։ Ամեն մի մարդ, ինչպես գիտենք, ունի մի անգամ կասկածելու բախտը։ Ամեն մի մարդ, ինչպես գիտենք, ունի մի անգամ հաղթելու բախտը։ Ամեն մի մարդ, ինչպես գիտենք, ունի մի անգամ պարտվելու բախտը։ Ամեն մի մարդ, ինչպես գիտենք, ունի մի անգամ ...

զարնան իրենց հողերը մշակել, ինչպես կը հաւատան, սովամահ ըլլալու վրայ են ու չեն կարող դէպի Մշոյ դաշտը գալ և իրենց թշուառ զաւակներուն համար օրապահիկ հայթայթել և Խոյթեցին մինչև դաշտ 3-4 ժամու ճամբայ գալ, նոյն իսկ վառելափայտ բերելու համար կէս ժամու հեռաւորութեամբ չեն կարող երթալ և այսպէս պաշարման վիճակի մէջ են։ Եթէ Քիւրտերը քիչ շատ կը քաշուին հոն գտնուող զօրաց ներկայութենէն, կը լուի թէ հոն մնացած մէկ դունդ զօրքն ալ ետ պիտի գայ. անկէ ետք Խոյթեցիներուն փախչելէ զատ ուրիշ ազատութեան ճամբայ չկայ։ Այս դժբախտ ժողովրդեան վերին աստիճանի արպահանջի վիճակը Ձեր բարձր Սրբազնութեան ներկայացնելով կը խնդրեմ որ նախ պահանջէք զօրքը չհեռացնել անկէ և Բ. ապահովել Խոյթի և Բռնաշէնի Հայերը պարապելու իրենց մշակական և երկրագործական զբաղումներուն և վերջապէս վերջ մը տալ քրդական բռնութիւններուն եւ աւազակութիւններուն, խաֆիրութիւններու եւ աղայական տիրապետութիւններուն։ Կսպասենք ձեր դիմումներու արդիւնքին՝ մխիթարելու համար խեղճ Խոյթցիները»։

* * *

ՏԷՐԷՊԷՅԻՆԵՐԸ ԳՈՐԾԻ ՎՐԱՑ ՀԱՅԵՐ ՈՐ ԳԱՂԹԵԼ Կ'ՈՒԶԵՆ

Պաշտպանէ զրէթէ մէկ ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Պէզ գիւղի Հայերը դիմած են Պատրիարքարան եւ նկարագրելով իրենց արգահատելի վիճակը դրման խնդրած են։ Այսպէս յիշեալ գիւղացիք կ'ըսեն թէ՝ կառավարութիւնը միայն անուանական է եւ հակառակ հազարաւոր անչափներ եղած դիմումներուն, ոչ մէկ գործնական չէ եղած իրենց ցաւերուն։ Պէզ գիւղացիները ժամաւորաբար կը բողոքեն չէջիս Համիտ փաշայի եւ ուրիշ չէյխերու դէմ որոնք, կ'ըսեն, Աղաակի եւ չրջանի մարդասպաններուն եւ հարբուստահարութիւններուն հեղինակներն ու դրդիչներն են։ «այս բոլոր բռնակալները ծծեցին հայուն արիւնը ու կառավարական պաշտօնեաները խուլ մնացին մեր գանգատներուն. ո՞ւր է սահմանադրութիւնը. եթէ մեզի չի պաշտպանէք, մենք պիտի լքենք մեր հայրենի հողը ու պիտի գաղթենք. ինչպէս որ մեր նախնիքը ասկէ առաջ չտոկալով բռնակալութիւններու գաղթեցին Պարսկաստան. ատոնց բոլոր հողերը գրաւած է յիշեալ բռնակալ փաշան եւ հիմա կ'ուզէ որ մեզի ալ այս վիճակին հասցնէ։» Պէզ գիւղացիները թախանձագին կը խնդրեն որ Պատրիարքարանը այս մասին պէտք եղած դիմումը ընէ եւ իրենց վիճակին դրման մը խորհուի։

* * *

Կարնոյ «Յառաջ»էն կը քաղենք հետեւեալները. —

ԴԵՐՋԱՆ (մեր մասնաւոր թղթակցէն). Աբաղորի բռնատիրող Փաշա պէկը մեռեր էր, ուշարի պարտքին համար կառավարութենէն հէնիզի կ'երթան։ Հարիւրաւոր տաւարները, 7-8 մատակները, 3-4 ձիերը կը պահուին, և մէկ կով ու 2-3 հորթ ցոյց կը տրուին։ Պաշտօնեաներ կ'երթան ատոնք բերելու։ Փաշա պէկի եղբայրը Իպրահիմ աղա, կէնճնէկ աղասի Բեազիմ աղա չատոնց կ'ուզէին որ գիւղին իսկական տերերէն մնացորդ, այժմ մարապա երեք տուն Հայերը գիւղէն հանեն, քանի որ ատոնց «մաքէն կ'անցնի» հողային դատ բանալ։ Քանի մը անգամ կ'առաջարկեն Հայերուն որ ելլեն, Հայերը չեն ուզեր. կը դիմեն կառավարութեան, ոստիկան կը բերեն։ Եւ ահա սովորական զբաղարտութեամբ մը, — իբր թէ Հայերը ոստիկանին օձիքը պատռեր են, ծեծեր են, դանակ քաշեր են, բանտ կը տանին Պէրպէրին տղան Արութը, որդին Գրիգորը, Թաղոյեան Համբարձումը, Պէրպէրեան Տրդատը (այս վերջինին տունը 7 տարի առաջ կոխեցին գիշերով, թալեցին, ծեծեցին, և խեղճը ծանր վէրքերով կը տանի՝ եօթը տարիէ ի վեր). յետոյ գթալով հիւանդոտ Տրդատը և Թաղոյեանը կ'արձակեն. իսկ Արութը ու Գրիգորը աւագ չաքաթէն ի վեր բանտը կը մնան։ Գրիգորը քսան տարու երիտասարդ մըն է, բթամտերուն «քէյկպէյ» զարկեր են ու ծեծելով 4-5 ժամայ ճամբայ Մամախաթուն՝ բանտ տարեր են, իբր թէ ոստիկան ծեծողը այս ըլլայ։ Խեղճերը «ճինայէթ»ով յանցաւոր են, հացի դրամ չունին, տէր ու տիրական չունին։

* * *

ԲԱԱՍԷՆ-ՀԵՐԹԵՒ, 10 Ապրիլ (մեր մասնաւոր թղթակցէն). — Հերթեւէն 25 վայրկեան հեռաւորութեամբ, դէպի թէքմէնի կողմը եափաղի կամուրջներու մօտ կը կողոպտուին ու կը վիրաւորուին Պիթլիսէն և Խնուսէն եկած անդին Հայեր, որոնք Պոլիս կ'երթային ապրուստ ճարելու։ Երկու զինուած աւազակներ նախ կը թալէն Պիթլիսցի 12 Հայերը, հրացանները անոնց կուրծքերուն ուղղած։ Կը յափշտակեն 7-12 ոսկի, Պետրոս անուն երիտասարդէն ալ մէկ պայլը՝ 3 մէճիտ արժողութեամբ։ Խնուս Գարաքէօփրիի գիւղացի Անտօ Կարապետեանին, Իսրայէլ Միլոյեանին ձիերը կ'առնեն Կարին կը բերեն ծախելու։ Անտոի վրայէն կ'առնեն 26 ղրշ. մէկ չաքէթ, 3 արծաթնոց, մէկ խուրմ մանր մունր իրեղէններով։ Իսրայէլէն կը յափշտակեն 20 լիրա, մէկ անկողին։ Իսրայէլը աւազակներուն կը դիմադրէ, սակայն կը պարտուի։ Աւազակներէն մէկը սուրով կը ճեղքէ երեսը։ Գիւղացիներ ձիերէն մէկը 18 ոսկիի, միւսը՝ 30 ոսկիով գնել ուզեր են ճամբան, բայց տէրերը մերժեր են։ Կողոպտուածներ եկան Հերթեւ լուր տալու և միանգամայն հայրենակցական օգնութիւն գտնելու։ Թուրքերը մերժեցին։ Քանի մը հայ երիտասարդներ աւազակներուն ետեւէն գացին, բայց արդէն հետքերը կորսուած էին, Իսրայէլ Միլոյեանը վիրաւոր վիճակի մէջ Հասան-Գալէ գնաց կառավարութեան լուր տալու։ Ցիմնապետ Ֆիքրի Էֆէնտին ութ հեծեալ ոստիկան զինուորներով Հերթեւ հասաւ և աւազակներուն ետեւէն գնաց, հետը տանելով ձիերու տէրերը։ Աւազակներէն մէկը երկայնահասակ մարդ մըն է, թխադէմ և սև ընչացքներով, միւսը կարճահասակ ալեհեառն մարդերով, աչքերը կապոյտ, երկուքն ալ լաղի տարազով։ Թուրքերը և Հայերը կը հաւատան թէ մէկը յայտնի ոճրագործ Շեւքրին է որ երեք ամիս առաջ փախաւ Կարինի բանտէն, 10-11 ընկերով, նոյնիսկ տեսնողներ եղած են։

ԿՈՓ, 4 ապրիլ (սեփ. թղթ.) — Թերեւս չկայ գաւառ մը, որ ունենայ հողային այնքան բարդ խնդիրներ, որքան Պուլանըզ։ Գարուն է։ Երկրագործ ժողովուրդը դունդազունդ կը դիմէ տեղական կառավարութեան՝ ետ ստանալու համար իր արտու ափերը, որոնք խլուած են կարգ մը Թուրքերու, Քիւրտերու և Մուհաճիրներու կողմէ։ Կառավարութիւնը ոչինչ կ'ընէ։ Ցիշեմ քանի մը կարեւոր փաստեր։

Ա. Կեզրոնէն 1 ու կէս ժամ հեռաւորութեամբ, Ծոնճալու գիւղի բնակիչներէն Լութֆիկ Մխէեանի և ընկերներ Սարգիսի Սլոյի, Յակոբի և Պողոսի արտերը, Սանջանագրութեան օրով «Մուհաճիրէն Բամիսիսնի» կողմէն կը տրուին Թուրք մուհաճիրներուն։ Լութֆիկի և ընկերներուն բաղմաթիւ բողոքները ապարդիւն անցան։ Կառավարութիւնը խստիւ յանդիմանելով կը հեռացնէ բողոքողները, իսկ մալ միւսիրին մուհաճիրները քաշալերելով կ'ըսէ.

—«Գնացէ՛ք սպանեցէք և ձեր հողերը հայերուն մի տաք»։ Թշուառները ճարահատ հեռագրեցին Պոլիս Ներքին գործերու Նախարարութեան և Պատրիարքարանին, նաև Պիթլիսի կուսակալութեան և Առաջնորդարանին։

Բ. Ասկուզի Սարգիս Նազարեանի Աղտին ըսուած տրոը և կալը բռնի գրաւուած է Դէմուրչին գիւղացի չէյխ Մանուսը։ Դիմումներ տեղի ունեցան, բայց ապօգուտ։ Խնդիրը վճռուեցաւ ի նպաստ չէյխին։

Գ. Թէեւ հրաման եկած է, որ հողային խնդիրները վարչական եղանակով լուծուին, բայց քանի մը հայրենական պաշտօնական թղթեր յայտնի աչառութեամբ կը զրկեն Հայ ժողովուրդը, իսկ Թուրքերն ու Քիւրտերը կը պաշտպանուին։ Այսպէս Լաքաթի 60 տուն Հայերը երկու տարիէ ի վեր բազմաթիւ դիմումներ կ'ընեն, սակայն և այնպէս կը ձախողին, իսկ չէյխ Ասատի նման միւսթէպիտ մը բրտօրէն կը հալածէ Հայերը և կ'արդիլէ իրենց սեփական արտերու մէջ ափ մը հող իսկ ցանել։

Դ. Մանավկերտի Խասիկ գիւղացի Ապտալեան Գարեգին և իր որդին՝ Եղիշէ իրենց չայիրին քովը գտնուած արտը ցանելու պահուն յարձակում կը կրեն նոյն գիւղացի քիւրտ Ռիֆզէրի Ասմատի կողմէն։ Գարեգինի գլուխը և ձեռքը կտրտելէն յետոյ դաշոյնով Եղիշէի ծնօտի տակէն ծակելով, առաջնատուներէն երկուքը կը կտրտեն։ Գարեգինի եղբայր Մարտոն Քիւրտին հրացանը թռցնելով կը փախչի մօտակայ Նուրէտտին գիւղը։ Նահիյէի միւտիրի կողմէն ղրկուած ոստիկաններու օգնութեամբ ոճրագործը կը ձերբակալուի։

Նման արարքներ յանախադէպ են այս խուլ անկիւններուն մէջ։ Ցորհիւ տեղական կառավարութեան երկդիմի քաղաքականութեան։ Հայաստանի Բարեկարգիչ յանձնաժողովի լուրջ ուշադրութիւնը կը հրաւիրենք այս թշուառ գաւառին վրայ։

ՌՈՒՍ ԴԵՍՊԱՆԻՆ ՓՈԽ-ԱՌՅՆԼՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՑԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Ս. Պատրիարք Հայրը, ինչպէս գրած էինք, անցեալ չաբթու ռուսական դեսպանատունը երթալով չնորհաւորած էր նորընտիր դեսպան Մ. տը Կիրսը։ Երէկ, նախապէս տրուած ժամադրութեան համաձայն, դեսպանը ճիշտ ժամը 3ուկէսին, ընկերակցութեամբ Ա. Թարգման Մ. Մանուկեանի, Ապէ. Պատրիարքարան գնաց փոխադարձ այցելութիւն տալու համար։ Ս. Պատրիարք Հօր կարգադրութեամբ փայլուն ընդունելութիւն մը եղաւ Մ. տը Կիրսի, որ Պատրիարքարանի դռնէն ընդունուեցաւ Պատր. Փոխանորդին և պաշտօնէութեան կողմէ և առաջնորդուեցաւ Դահլիճ, ուր կը սպասէր Ս. Պատրիարք Հայրը։ Դեսպանը կէս ժամու չափ մտերմական տեսակցութիւն մը ունեցաւ Ն. Ամենապատուութեան հետ։ Թարգմանի պաշտօնը կը կատարէր՝ Պ. Ե. Ալիքիար։ Տեսակցութեան ընթացքին դեսպանը ի մէջ այլոց հարցումներ ուղղեց թէ՝ կա՞յ Հայ եկեղեցիի լիակատար պատմութիւնը։ Պ. Ալիքիար դոհացում տուաւ դեսպանին հետաքրքրութեան և առանձինն պատասխանելով հարցումներուն ըսաւ թէ՝ Հայոց Սինոդը մէկ հատ է միայն և ան ալ կը գտնուի Էջմիածին. թէ՝ Պոլսոյ մէջ Սինոդ չկայ, այլ կան Կրօն. և Բաղաքական ժողովներ, որոնք միանալով Խան ժողով մը կը կազմեն, թէ՝ ֆրանսերէն պրուած լաւագոյն Հայոց պատմութիւնը Վիքթոր Լանկլուայինն է և Հայ Եկեղեցիի լիակատար պատմութիւնը Օրմանեան Սրբազանի վերջին հեղինակութիւնն է։ Մ. տը Կիրս փափաք յայտնեց որ Հայ եկեղեցիի պատմութենէն ունենայ և Ս. Պատրիարք Հայրը խոստացաւ անկէ հատ մը զրկել անպատճառ։ Դեսպանը հարցուց թէ՝ Ս. Պատրիարքը տարին քանի՞ անգամ պատարագելու սովորութիւն ունի. այս մասին Արշարունի Սրբազան պէտք եղած պատասխանը տալէ ետք, ըսաւ թէ՝ առաջին առթիւ որ պատարագէ, պիտի հրաւիրէ Ն. Վսեմութիւնը որպէս զի ներկայ գտնուի և Մ. տը Կիրս՝ չնորհակալութեամբ ընդունելով այս հրաւէրը, խոստացաւ առաջին առթիւն իսկ օգտուիլ։ Ս. Պատրիարք Հայրը և դեսպանը յետոյ տեսակցեցան այլ և այլ հարցերու մասին և Մ. տը կիրս ինչ ինչ տեղեկութիւններ հարցուց և անոնց մասին լիակատար ծանօթութիւններ ստացաւ։ Ժամը 4ին դեսպանը մեկնեցաւ, որու միջոցին դարձեալ Ն. Վսեմութեան հարկ եղած պատիւներն ընծայուեցան։

ՊԷՇԻՐԹԱՇԻ ԴԵՐԵՋՄԱՆԱՏԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ ՀԱՄՈՒՏԻ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

ՄԻՀՐԴԱՏ ՀԱՑԿԱԶՆ ՊԱՏ ԿՐ ՓԼՃՆԷ

Պէշիրթաշցին յաւիտենական խնդիրներ ունի, որոնք սակայն գրեթէ միշտ անլուծելի կը մնան և այդ խնդիրներուն մէջ կրնայ իր կարգին առաջնութեան մրցանակ չահիլ՝ տեղւոյն զերեզմանատան խնդիրը։ Համիտի օրերէն իսկ այդ զերեզմանատունը խնդրոյ առարկայ եղած և Երլոբդի բռնակալը ուզած էր գումարի մը փոխարէն այդ հողը գրաւել։ Եւ սակայն Սահմանադրութենէն ասդին ալ յաճախ այդ զերեզմանատունը խնդրոյ առարկայ եղաւ։ Վերջին անգամ զերեզմանատան կից գտնուող ոստիկան-զօրաց վարժարանին տնօրէնութիւնը վանդակորմով զերեզմանատունէն մաս մը հող միացուցած էր նոյն չէնքին (մօտ 6 - 700 կանգուն) և վանդակորմով մը պատած, այնպէս որ օր մը կրնար կառավարութիւնը պնդել թէ այդ հողը իրեն կը վերաբերի։ Այս մասին թաղեցին քանիցս դիմում ըրած էր Պատրիարքարան և սակայն հակառակ գրուած թաղրիրներու, պատը կը մնար ու հողը միշտ վանդի տակ էր։ Կիրակի օր, Պէշիքթաշի աղտ. երեսփոխան Միհրդատ Հայկազն, իր հետ քանի մը գործաւորներ առնելով գնաց զերեզմանատուն՝ փլցնելու համար պատը։ Պ. Միհրդատ Հայկազն նախ ներկայացաւ վարժարանին տնօրէնին և յայտնեցաւ թէ այն հողամասը, որ պարտէզի վերածուած է, զերեզմանատան կը պատկանի, ըսաւ թէ՝ պիտի փլցնէ պատը։ Տնօրէնը ընդունելով հանդերձ որ հողը զերեզմանատան մաս կը կազմէ, և իրենք ոչ է իրաւունք չունին անոր վրայ, խնդրեց որ յետաձգէ պատին վար առնուիլը՝ մինչեւ որ հարկ եղած տեղէն թէլէֆոնով հրահանգ ուղէ։ Սակայն Միհրդատ Հայկազն դիտել տուաւ թէ՝ քանի որ կ'ընդունի այդ հողին Հայոց պատկանիլը, ա՛լ ինչո՞ւ հարցնելու պէտք կը տեսնէ։ Եւ Պէշիքթաշի աղտ. երեսփոխանը վար իջնելով, գործաւորներուն հետ մէկտեղ, փլցուց պատը և հողը միացուց զերեզմանատան։ Միւս կողմէ, նկատելով որ զերեզմանատան կից գտնուող և Սելոզրզի պալատին լոյս մատակարարող մեքենաներու խողովակները զերեզմանատան մէջ երկարած են և թէ այդ իսկ պատճառաւ պատին այդ մասին վրայ դուռ մը բացուած է հինէն ի վեր և այդ պարագան ալ կրնայ ապագայ կնճռոտութիւններու տեղի տալ, երէկ Ս. Պատրիարքին դիմում ընելով, խնդրեց որ այդ մասին եւս կարգադրութիւն մը ըլլայ։ Պատրիարքարանէ այս առթիւ թաղրիր մը գրուեցաւ պատկանեալ իշխանութեան՝ խնդրելով որ խողովակները վերցուին և այդ դուռն ալ փակուի։

ՀԱՇՈՒԵՏՈՒԹԻՒՆ ՄԸ ՈՐ Կ'ՈՒՇԱՆԱՑ

Ազգ. Հիւանդանոցի հոգաբարձութիւնը գրով մը դիմած է Պատրիարքարան և յայտնելով թէ Հիւանդանոցի նախորդ չրջաններու հոգաբարձութեան ատենապետներէն Յարութիւն էֆ. Ալանեան հակառակ կրկնակի դիմումներու, մինչեւ այսօր չի ներկայացներ նոյն չրջաններուն մէջ տրուած նուազահանդէսէ մը մնացած 300 ոսկիի հաշուետուութիւնը և մինչեւ նոյն ատեն չի գանձեր Հիւանդանոցէն իր ունեցած 10 ոսկիի պահանջը, խնդրած է որ այս մասին հարկ եղած դիմումը կատարուի պատշաճաւոր և ստացուի այդ հաշիւը։ Հոգաբարձութեան այս գիրը ներկայացուած ըլլալով Տնտես. Խորհուրդին, այս վերջինը որոշեց գրով մը դիմել Ալանեան էֆ.ի՝ յանձնարարելով որ անմիջապէս ներկայացնէ նոյն հաշիւները։

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ ԵՒ ՏԱՐԻՔՆԵՐՈՒ ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ազգ. Պատրիարքարանը երէկ հետեւեալ չրջաբերականը զրկեց գաւառներու առաջնորդարաններուն. —

«Տարւոյս յունվար 11 թուականաւ վեր ուղղած չրջաբերական գրովը ծանուցեր էինք Ձեզ թէ պատերազմական նախարարութեան կողմէ վերջերս հրահանգ տրուած է զինուորական իշխանութեանց, որպէսզի ընդունելի համարուին նաեւ 1305 1306 և 1307ի ծնունդներու տարիքի օրինաւոր սրբագրութիւնները և այդ մասին տեղի ունեցած դիմումները։

«Պետական այս կարգադրութիւնը ինչ ինչ թիւրիմացութիւններու տեղի տուած ըլլալով, այդ մասին Բ. Դրան կողմէ մեզ ուղղուած ծանուցագրի մը վրայ՝ հարկ կը դատենք քանի մը լուսաբանութիւններ հաղորդել Ձեզ, որպէսզի ըստ այնմ գործ դրուի պէտք եղածը երբ «թասկիրը սինն»ի խնդիրներ ծագին։

Ա. 1299-1304ի ծնունդները երբ 1305ի ծնունդներուն յաւուրք «զուրա»ի ֆէրմանին ընթերցուիլն առաջ, աղերսագրով մը դիմած և «թասկիրը սինն» պահանջած են, իրենց կատարած սրբագրութիւնը ընդունելի պիտի ըլլայ զինուորական իշխանութեանց կողմէ։

Բ. 1305ի ծնունդները երբ իրենց յաւուրք «զուրա»ի գործողութեանց ատենը դիմած և «թասկիրի սինն» ստանալու համար դիմումներ կատարուի պաշտօնապէս և ստացուի այդ հաշիւը։ Հոգաբարձութեան այս գիրը ներկայացուած ըլլալով Տնտես. Խորհուրդին, այս վերջինը որոշեց գրով մը դիմել Ալանեան էֆ.ի՝ յանձնարարելով որ անմիջապէս ներկայացնէ նոյն հաշիւները։

ՀԱՅԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Հուայթ Իրվիլէն (Աւերիկա) կը գրեն "Ասպարէզ,, թերթին. —

«Ապրիլ 9, երեքշաբթի երեկոյեան ցաւալի արկած մը պատահեցաւ։ Քանի մը հայ երիտասարդներ զործարանի վերի յարկէն կ'ուզեն վար փոխադրել քանի մը երկաթի տակառներ զոր կը զետեղեն էլեվէյթորի վրայ։ Ցաւալի դժբախտութեամբ մը էլեվէյթորը կտրեցաւ և երեք յարկէ վար ինկաւ։ Լսելի եղաւ։ Վրան կը մնային վեց անձեր, երկուքը Թուրք, իսկ 4ը հայեր էին։ Վնասուածներուն են՝ Յակոբ Տիրանեան՝ ամուսնացած և զաւակներու տէր, Սուքիաս Մուրատեան, բժիշկներ կ'ըսեն որ այս երկուքը չեն ազատիր, իսկ միւս երկու հայերը, Եղիա և Յովհաննէս ծանրապէս վիրաւորուած են։ Թուրքերէն Մահմուտ Գիլալ վէրն վիրաւորուած է, չունչ կ'առնէ կսիրդէն, իսկ միւս Թուրքը հաճի Պալալ, գլուխը պատռած է։ Անմիջապէս Ճն ալ Ուսլրը՝ հիւանդանոց փոխադրեցին բուժուելու համար»։

ԱՆԿԱՆԻՔ ՀԵՐՔՈՒՄ ՄԸ

Վարչական Դիւանին կողմէ հետեւեալ պաշտօնագիրը հաղորդուած է հրատարակութեան համար, որուն տակ սակայն, կը պակսի Պատրիարքարանի պաշտօնական կնիքը. — «Տեղական աղգային թերթերէն ոմանց մէջ որքան որ հրատարակուած է թէ Պոլսոյ Վիլայէթին Իսարլի Ժողովոյ անդամ Վանան Վրդ. Ճակրճեան հրաժարած է, բայց այս տեղեկութիւնը հիմ չունի, եւ թէ Ս. Պատրիարքը զոհ է անոր պաշտօնավարութենէն»։

Սամաթիա, 24 Ապրիլ 1912
Շոգեկառքը Սիրքէճիէն կը մեկնի ժամը 2.46 (Ե. Ե.)

ՄԱՀ

Տիկին Քաթէրինա Գրիգոր Ա. Պրուսլեան, 52 տարեկան, Ապրիլ 8ին մեռած ըլլալով Պրայլայի մէջ, ժարմինը Ապրիլ 10ին ամփոփուած է տեղւոյն գերեզմանատունը։ Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք այս տխուր առթիւ։

ԾԵՐԱԿՈՅՏԻՆ ԵՐԷԿԻ ՆԻՍՏԸ

ԳԱՀԱՃԱՌԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՄԻՋԱԴԷՊ ՄԸ. ԹԱԼԷԱԴ ՊԷՅԻ ԵՒ ՏԱՄԱՏ ՓԷՐԻՏ ՓԱՇԱՅԻ ՄԻՋԵՒ

Մերակոյտը երէկ գումարուեցաւ և Նախ և առաջ զբաղեցաւ գահաճառի պատասխանին վիճաբանութեամբ։ Այս առթիւ Եօրկիատիս էֆ. դիտել տուաւ թէ պատասխանին մէջ յիշուած «օրէնսդրական իշխանութեան և կառավարութեան միջև ծագած վէճին» մասը պէտք է վերցուի և անոր տեղ դրուի «կառավարութեան և Երեսփ. Ժողովին միջև ծագած, նախադասութիւնը, քանի որ Մերակոյտը երբեք ոչ է առնչուած ան վէճին հետ, որուն հետեւանքով լուծուեցաւ Խորհրդարանը։ Տեղեկաբերը պատասխանեց թէ «օրէնսդրական» բառը յիշուած է, որովհետեւ գահաճառին մէջ ալ այնպէս ըսուած էր։ Ցետոյ յաջորդաբար Մերակոյտը ունցաւ գահաճառին պատասխանին միւս մասերուն։ Պատասխանին «35դ. յօդուածին» վերաբերեալ մասը երկար վիճաբանութեան տեղի տուաւ։ Դիլսաւորաբար Եօրկիատիս էֆ. դիտել տուաւ որ մինչեւ որ Երեսփ. Ժողովին կողմէ այս մասին բարեփոխման առաջարկ չի գայ, Մերակոյտը չի կրնար արտայայտուիլ։ Բիզա փաշա սակայն իր կարդին պատասխանեց թէ 35դ. յօդուածին բարեփոխումը սկզբունքով ընդունուած է Մերակոյտէն։ Ժողովը մերժելէ յետոյ Եօրկիատիս էֆ. դիտողութիւնը, անցաւ այն մասին ուր յիշուած էր Անատոլուի և Բուրսէլիի յանձնաժողովներ զրկուելու պարագան։ Դարձեալ Եօրկիատիս էֆ. աւելորդ նկատեց այս պարագային յիշատակութիւնը, քանի որ կառավարութիւնը ազատ էր յանձնաժողովներ զրկելու։ Ֆէրիտ փաշա դիտել տուաւ թէ յանձնաժողովներու առաքումը պէտք չէ սահմանափակի միայն յիշուած նահանգներուն մէջ, այլ պէտք է տարածուի նաեւ բոլոր նահանգները, մինչեւ որ գահաճառին մէջ յիշուած չեն Անատոլուի նահանգները։ Ներքին գործոց փոխ նախարար Թալեաթ պէյ յայտարարեց թէ յանձնաժողովներու առաքումը պիտի ընդհանրանայ, հետեւաբար պատասխանի այս մասը յանձնաժողովին դրուեցաւ։ Պատերազմի մասին խօսելով, Բէշիտ Աքիֆ փաշա առաջարկեց բարեփոխել պատասխանին մէջ իշուած այն մասը թէ «օսմ. ժողովուրդը կը կրթենի քաղաքակիրթ աշխարհի խղճին վրայ», ըսաւ թէ՝ եթէ քաղաքակիրթ աշխարհը խիղճ ունենար, թոյլ չպիտի տար ոտնակոխ ընել տալ միջազգային իրաւունքները, ինչպէս նաեւ գործուած անիրաւ յարձակումները։ Ս.րտաքին գործոց նախարարը յայտարարեց թէ պէտք չէ մերթատանել քաղաքակիրթ աշխարհը, որովհետեւ պատասխանին մէջ յիշուած բառերը կ'ակնարկեն Եւրոպայի կարծիքը որ հարիւրին իննսունը հինգ նպաստաւոր է օսմանցիներուն։

Վիճաբանութեանց աւարտումէն վերջ Տամատ Ֆէրիտ փաշա յայտարարեց թէ՝ չէր ուզեր վիճաբանութեանց մասնակցիլ, որովհետեւ ինք կը հաւատար թէ Սահմանադրութիւնը ոտնակոխ եղած է վերջին ընարութեանց միջոցին։ Գաւառներու և մանաւանդ մայրաքաղաքի մէջ ժողովուրդը ազատ չի թողուեցաւ, ըսաւ անիկա, իր քաղաքական կարծիքը յայտնելու։ Ես կը պնդեմ այս կէտին վրայ, որովհետեւ այս ընթացքով մենք պիտի կորսնցնենք այս երկիրը փրկելու վերջին յոյսը։ Ցետոյ ըսաւ թէ՝ կառավարութեան ընթացքին դէմ ինք կը բողոքէ քաղաքակիրթ աշխարհին առջեւ։ Թալէաթ պէյ, ներքին գործերու փոխ-նախարարը, պատասխանեց թէ՝ ընտրութիւնները օրինաւորապէս կատարուած են և թէ՝ որչափ ատեն որ ատենապանը չապացուցանէ իր ամբաստանութիւնները, իր խօսքերը արժէք չպիտի ունենան։ Տամատ Ֆէրիտ փաշա պահանջեց նախարարէն ետ առնել ա.դ խօսքը ըսելով. «Եւրոպ. Ժողովին մէջ գործածած բառերնիդ հոս չէք կրնար գործածել։» Թալէաթ պէյ մերժեց ետ առնել իր խօսքը։ Ասոր վրայ Տամատ Ֆէրիտ փաշա անոր վերադարձուց իր խօսքերը։ Իթթիհատական Հիւսնի փաշա ապացոյց ուզեց Տամատ փաշայէն, ըսելով թէ՝ հակառակ պարագային նկատի չպիտի առնուէին իր խօսքերը։ Ֆէրիտ փաշա անոր ալ պատասխանեց ըսելով որ չվայլեր իրեն ասանկ լեզու մը գործածել Մերակոյտին մէջ։ Ասոր վրայ նախագահը յայտարարելէ յետոյ թէ՝ եթէ աս մասին բողոքներ ներկայանան պիտի քննէ Մերակոյտը, փակեց նիստը։

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՄԱՀՄՈՒՏ ՇԵՎՔԷԹ ՓԱՇԱՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պատերազմական Նախարար Մահմուտ Շեվքէթ փաշա հետեւեալ յայտարարութիւնները ըրած է խմբագրի մը.—

«Մեր զօրախումբերը կը դիմադրեն Հռոդոսի մէջ և իրենց պարտականութիւնը կը կատարեն։ Եգէական ծովու մէկ քանի կղզիներու գրաւումը կ'ապացուցանէ Իտալիոյ ունեցած յաջողութիւնը և այն թէ որ ատենն գէշ դիրքի մը մատնուած է իտալական կառավարութիւնը։ Ա.ս վերջինը խաբած էր իր ազգը խոստանալով նուաճել Տրիպոլիսը, 30000 զինուորներով և հիմա չը գիտեր ինչպէս հանդարտեցնել ազգին մէջ տիրող յուզումը։ Իտալիա ոչ մէկ կերպով պիտի օգտուի կղզիներու գրաւումէն և պարտաւորուած պիտի ըլլայ ինքնի՛ն թողու զանոնք վաղը։ Թէ ինչ պիտի ըլլայ պատերազմին վախճանը, ատիկայ յայտնի չէ։ Ինչ որ ատոյդ և ապահով է օա է թէ օսմ. բանակը ծայրայեղ դիմադրութիւն մը պիտի ընէ»։

ԻՏԱԼԱՑԻՆԵՐԸ ԳԵՐԻ ՉԵՆ ԱՌԱԾ

Պաշտօնական տեղեկութեան մը համաձայն սխալ է այն լուրը թէ Իտալացիները 50 օսմ. զինուորներ գերի բռնած ըլլան։ Ընդհակառակը զինուորները քաշուած են Հռոդոսի լեռը և կը դիմադրեն թնդանօթներով։ Երբէք ամոյ չպիտի կրնան դիմադրել։ Միջերկրականի կուսակալ Սուպհի պէյ կրցած է միանալ օսմ. զօրքերուն։ Պատերազմը կը շարունակուի։

ՕՍՄ. ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ

Օսմ. փոխառութեամբ ձեռք բերուելիք 10 միլիոն ոսկիի գումարին 2 ու կէսը պիտի յատկացուի Սամսոն-Սվազ երկաթուղիի շինութեան, իսկ մնացածով պիտի գոցուի պիւտճէի բացը։ Պանքան ամէնէն առաջ 2 միլիոնի կանխավճար մը պիտի ընէ։

ԱԿԱՆՆԵՐՈՒ ՎԵՐՑՈՒԻԼԸ

ՏԱՐՏԱՆԷԼ, 7 Մայիս. — Ականները վերցնելու գործողութիւնը ըսկսաւ այս առտու մայիսի 6ին խստութեան պատճառաւ։ Պատերազմական նախարարութեան ձեռնհաս մարմինը յայտարարեց թէ 2-3 օրէն նեղուցը բոլորովին բաց պիտի ըլլայ։ Նոյն իսկ թերեւս աւելի կանուխ եթէ երբէք օդերը նպաստեն։

ԼԷՕՆ ԳԱԶՈՒՆ

ԵԷՆԻՋԷՐԻ ՀԱՍԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Բ.

ՄԱՄԼՈՒՔՆԵՐԸ

Մութն ու լուսուն ճամբայ ինկանք. կ'երևայ թէ զորձը չատ ստիպողական էր, որովհետև մեզի աղօթքի անգամ չպատցուցին։ Հնձուած գարիի արտերուն մէջեն կը քալէինք դէպի ձախ։ Հազար քայլ մը դեռ չառած՝ տեսանք որ տեղ մը քարեր դիզուեր են, տեսանք նաև մեր ընկերներէն մէկ քանին դիակը։ Մամլուքներու պզտիկ կայք մը ըլլալով այդ տեղը, սպաններ էին զանոնք. և սակայն չէին կողոպտեր. միայն անոնց գլուխները և ղենքերնին առեր տարեր էին։ Ալի Սայիտ ըսաւ ինծի.

— Տեսա՞ր, Հասա՛ն, տեսա՞ր սա եզիպտոսի Պէրպէրներուն կերած ագուրը.

Ցետոյ սկսաւ խնդալ ու երգել.

—Եզիպտոսի Պէրպէրները աղէկ կ'ապրիլեն, — ժորուք կը կորեն առանց օճառի.

Մէհմէտ սկսաւ պռաալ.

—Մենք ալ անոնց մաղերը պիտի վար տանք մեր Եանիչարի անելիներով։ Ով որ գիչերը խաղի մէջ կը չահի, ցերեկը անոր կրկինը կը կորսնցնէ։

Ամենքը վրէժխնդիր կատաղութեամբ մը կը քալէին Մամլուքներուն վրայ։ Մերթ ընդ մերթ հրամատարը ձիրուն վրայէն ետին կը դառնար, մեզի կը նայէր, և

—Հա՛, հա՛, կը ձայնէր։

Բառորդ ժամ մը վերջը նորէն ետեւը դարձաւ.

— Հա՛, հա՛։ Խոզերը՝ Հա՛, հա՛, մատակ խոզերը, այո՛, մատակ խոզերը։

Ամենքս մէկ պռոալ սկանք.

- Առա՛ջ, տասնրմէկերորդ, առա՛ջ։

Կէս օրին ժոտիկ, սաստիկ տաք օդով մը, լեզունիս չորցեր էր, ուստի քիչ մը նստեցանք։ Սակայն անմիջապէս թմբուկին հրամանին վրայ ոտքի ելանք. ոմանք գետինը փռուած մնացին. յոգնած էին. ուրիշներ ալ մեռած։

Մէհմէտ և ես նոր կօչիկներ հագած էինք. միսներուն ոտքը գետինը ըլլալով, ճամբուն քարերէն արիւներ էր։

Իրիկուան աղօթաժամին մօտերը արաբ հողերու շուրջէն անցանք, նշենիներու և դեղձիներու արտերու մէջերէն՝ ձախ կողմերնիս Թողլով գիւղ մը, դէպի ալ սուրցինք, դէպի առուակ մը, որուն վրայ խոյացան ամենքն ալ ջուր խմելու համար։

Այդ պահուն, հեռուէն թէև, սակայն որոշապէս լսելի եղաւ թնդանօթի գոռում մը, որուն վրայ խումբ մը աքընճիներ վազելէն եկան մեզի միացան։

Զայնի մը լսելի ըլլալուն չափ հեռաւորութեամբ

—Մի՛ յառաջանաք, կը պոռային մեզի, թշնամին ատուար բազմութիւն մը ունի. ձա՛խ դարձէք։

Իրենցմէ երկուքը մեր հրամատարին մօտեցան խօսելու համար. իրենց ի՛նչ ըսելը յայտնի չեղաւ թէև, բայց անոնք մեր գլուխը անցան և առաջնորդեցին։ Մեր պէօլիկը եօթներորդին աջ կողմէն պատերազմի պատրաստուեցաւ։ Ժամու մը չափ սպասեցինք, ու իր լրումին հասած լուսինը ելլելուն՝ եօթներորդին ետևէն անօթի, յոգնած՝ յառաջ խիզախեցինք։

Թնդանօթի գոռումը չատնց ի վեր դադրած էր. միայն հեռուէն կարմիր բան մը կը տեսնուէր. հետզհետէ չատցաւ, և ի վերջոյ նշմարելի եղան չատ մը կարմիր կրակներ, վրաններու տակ Զէյնուորներ կային այդ վրաններուն տակը. իրենց հագուստներէն ճանչցանք զանոնք, Ապաճացի էին. մեր մէջէն չատերը կէկի և Թոսքայի ցեղերէն ժամանաւոր հաճոյք մը զգացին իրենց հայրենակիցները տեսնելով։ Ամենքս պահ մը իրար խառնուեցանք. մենք չատերը իրենց ծարները բացին ուտելիքներնին անոնց հետ բաժնելով։ Մէհմէտն ալ նոյնը ըրաւ և լսեցի որ վրանները տակէն սազեր ծնգաձայրի երգեր կը նուագէին։ Ոչ ոք մեր հաճոյքը կ'ընդմիջէր։

Այս Ապաճացիներու խումբէն զատ անցանք նաև Թաթարներու խումբի մը առջևէն, որոնք մուշտակապատ գլուխներնին հագիս վեր կը վերցնէին գետինը ձիերնուն քովը պառկած տեղերնուն՝ մեր անցքը դիտելու համար։

Աւելի խորերը գացինք։ Վերջապէս տեղ մը կանգ առինք։

—Աղէկ քալեցինք, ըսաւ Ալի Սայիտ, երբ քիչ մը նստեցանք խոտերուն վրայ։

—Այդ քալելը աղէկ է իմ հիւանդ ոտքիս, ըսաւ Գարա Ալի չավուշը, կօշիկները հանելով։

Աղտոտած և արիւնոտած վիրակապերը զոր Պէյլանէն ի վեր վրան կը կրէր, փերցուց հանեց, և իրեն նուէր բերած անձեռոցս պատռելով վերքը պիտի կապէր.

—Աղա՛ս, ա՛ռ մկրատ, ըսաւ Մէհմէտ։

Լապտերին լոյսովը տեսայ Մէհմէտին մկրատը, ոսկի կոթով, սքանչելի մկրատ մը, ազնուական կնոջ մը յատուկ։ Զհարցուցի իրեն թէ ուրկէ՞ առեր էր զայն, ինչպէս ինք ալ ինձի չհարցուց թէ ո՛ւրկէ ձեռք անցուցեր էի ապարանջանները, երբ գաղտուկէն զանոնք ցուցուցի իրեն։

Մէհմէտ շարունակեց ըսել.

—Աղա՛, եթէ վազը մեռնիմ, այս մկրատը ձեզի ըլլայ։

Մեր վրաններն ու սանները, մեր միւս բեռները մէջեղ չկային։ Մեր հրամատարին պատուէրին համաձայն վար դրեր էինք դէմերնիս ելլող հայ, յոյն վաճառորդներու բեռները, և գրաւեր էինք ցորենով բեռցած ուղտերու բեռը։ Երբ այս մարդիկը կը դժգոհէին, մեր հրամատարը կը պոռար երեսնուն.

(30) Թարգմ. ՀԱՅԿԱՆՈՇԵ ՄԱՌՔ

ՄԻ՛ ԱՆՏԵՍԷՔ

ՇԱԲԻՐՕԿՐԱՖ ԱՆՈՒՆ ԳՈՐԾԻՔԸ

Շաբիրօկրաֆի մեքենայով՝ տասը վայրկեանի մէջ կարելի է 150 ընդօրինակութիւններ ընել ո՛ և է տեսակ գրութենէ մը։ Գինն է 175 գրուշ։

Աւելորդ է ըսել թէ Շաբիրօկրաֆը անհրաժեշտ գործիք մըն է բոլոր այն վաճառականներուն, դպրոցականներուն, բանախօսներուն որոնք կ'ուզեն ժամանակի մեծ խնայողութիւնով մը ամենաարագ կերպով ընդօրինակել իրենց գրութիւնները։

Անոնք որոնք կ'ուզեն մանրամասնութիւններ ստանալ Շաբիրօկրաֆի մասին, թող դիմեն հետեւեալ հասցէին. —

Պոլիս, Զիչէք Բազար փողոց, Գուրը Գաւվէճի խանին մէջ 20–24 թիւ, Ապրահամ Շէմթօվ որդւոց սենեակը։

Գաթալօկները ձրիաբար կը ղրկուին բոլոր փափաքողներուն։ 4—10

ԱՌԱՋԻՆ ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՁՐԻ

ՏՈՔԴՕՐ ԳԱՌԼՕ ՑԱԿՈԲԵԱՆ

ԱԲՐՈՏԻԹԵԱՆ
Եւ
ԾՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՑ

ԱԽՏԵՐՈՒ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԴԱՐՄԱՆՈՒՄԸ

Ծննդական և աբրոտիթեան գործարաններու Հիւանդութեանց մասնագէտ բժշկ Տօքթ. Գառլօ Յակոբեան գիտական վերջին նորութեանց շնորհիւ առանց ցաւ պատճառելու ենթակային հիմնապէս կը բժշկէ ֆրանկախտը, հին և նոր ցերսամիզութիւնը, առնական անկարողութիւնը և սերմնահոսութիւնը, ինչպէս նաև երկու սեռի վերաբերեալ աբրոթիտեան և ծննդական հիւանդութեանց ամէն տեսակները և կանանց արգանդային հիւանդութիւնները։

Ամէն օր, կէս օրէն վերջ, բացի կիրակի օրէն կը գտնուի Պահէֆ-Գարու, չաքարավաճառ Հաճի Պէքիրի անկիւնը, թիւ 18, Մէրամէթճեան-Պիանքի դեղարանը։

Ուրբաթ օրերը ձրի

Կ'ՈՒԶԷ՞Ք

150,000 ՖՐԱՆՔ ՎԱՍՏԿԻԼ

ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ՓՐԷՏԻ ՖՈՆՍԻԷԻ ՊԱՐՏԱԹՈՒՂԹ ԴՆԵՑԻՔ

Մեր ամենուս ծանօթ Եգիպտական Փրէյէի Ֆոնսիէի պարտաթուղթերուն նման և սակայն գինը, ոսկի դրամ, 200 դահեկանի փոքր գումար մը ըլլալով հանդերձ՝ վիճակահանութեան թիւերը անոնցմէ չատ աւելի է, այսինքն՝ ճիշդ 2000 թիւերու պարգև կը շահեցնէ։ Երկու ամիսը անգամ մը ստորև նշանակուած թուականներուն վիճակահանութիւն տեղի կ'ունենայ։ Վիճակահանութիւնները Ամսթէրտամի մէջ՝ ժողովուրդին ներկայութեանը և նօտարի մը հսկողութեան ներքև կը կատարուին։ Թուրքիոյ մէջ Հոլանտական Փրէտի Ֆոնսիէի զրաւատուն չգտնուելուն՝ սոյն պարտաթուղթերը ամէն ատեն Ընկերութեանս ծախել կարելի է։ Վիճակահանութեանց մասնակցելու իրաւունքը ամբողջովին վերապահելով հանդերձ՝ տարեկան միմիայն 100ին 6 տոկոսի մը փոխարէն պարտաթուղթը ուանդ ձգելով մէկ ոսկի առնել կարելի է։

Կալուածի փոխանցումով երաշխաւորուած Հոլանտական Փրէտի Ֆոնսիէ պարտաթուղթերուն 200 դրչ. ոսկեդրամ վճարելով գնեցէք և այսպէսով 68 տարի ուրիշ որևէ դրամ չի վճարելով՝ սարսափ ցուցուած մեծ պարգևներէն մէկուն պիտի արժանանաք։

Փրէտի Ֆոնսիէ Հոլանտէի պարտաթուղթերուն վիճակահանութենէն չահուելիք տարեկան մեծ պարգևները ասոնք են.

2 Փետր.	1912	100,000 ֆր.
2 Ապրիլ	1912	75,000 »
2 Ցունիս	1912	150,000 »
2 Օգոստ.	1912	125,000 »
2 Հոկտ.	1912	62,500 »
2. Դեկտ.	1912	250,000 »

ԱԱՌԱՋԻԿԱՑ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

150,000 ՖՐԱՆՔ Է

Ասոնցմէ զատ մեծ քանակութեամբ և հազարաւոր ֆրանք չահող պարգևներ ալ կան։

Գնումի և տեղեկութեանց համար՝ Գալաթիա, Մէրթլպանի փողոց, Հուրիյէթ խան, թիւ 13—15, Օսմանեան Ֆոնսիէի ընկերութեան դիմեցէք։ Գաւառներէ և արտասահմանէ, պարտաթուղթի փոխարժէքը՝ չէք կամ մանտաքսթով ղրկելու է և ապրանքը իսկոյն կը զործադրուի։ 1—12

ՏՈՔԹ. ԹԱՇՃԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ

ԱՐՏԱՔԻՆ, ԾՆՆԴԱՄԻԶԱԿԱՆ ԵՒ ԿԱՆԱՆՑ ԱԽՏԵՐՈՒ

Նախկին Օգնական ուսուցիչ Օսմ. Բժշկ. Հանպարանի

Գիտական ամենավերջին մեթոտներով կարճ ժամանակի մէջ կը դարմանէ ամէն տեսակ մորթային, ծննդամիզական և կանանց ախտերը, ջերմամիզութիւն երիկամներու, միզամանի եւ այլ հիւանդութիւնները, ելեկտրաբուժութեամբ՝ սերմնահոսութիւնը, անկարողութիւնը, երազարձութիւնը. — (606)ի ՍԱԼՎԱՐՍԱՆԻ ՆԵՐԱՐԿՈՒՄՆԵՐՈՎ ԵՒ ԱՑԼ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՖՐԱՆԿԱՖՏԻ ԴԱՐՄԱՆՈՒՄ. մէզի, արեան, խոտի, քիմիական և մանրէաբանական քննութիւն։ Դարմանատունն է Պայազիտ, փոսթահանէին դէմի Սինէմեան դեղարան ամէն օր, կէս օրէն վերջ և երեկոները Գում Գարու, Լ. Պետրոսեան դեղարանը։

ԱՂՔԱՏՆԵՐԸ ԶՐԻ

ՄԵՐ ՑԱՃԱԽՈՐԴՆԵՐՈՒՆ ԱՒԵՏԻՍ

ՆՈՐ ԽԻՒՍ

Մահմէտ Ալի պէյի կողմէն հնարուած և Արքունի նախկին դեղագործ Եվրէնիտիի միջոցաւ պատրաստուած համբաւաւոր ԱՆԻՍՕՆԻ ԽԻՒՍը Գահէճ Գարու, Գասարեան դեղարանը և Մեր Ճամի, Մահմէտ Բեազիմ պէյի դեղի մթերանոցը, ինչպէս նաև բոլոր դեղարանները և մթերանոցները կը վաճառուին։ Գոլոյ մէջ գինն է 5 գրուշ։

ՔԱՐԼԸՄԱՆ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ, ԹԵՐԱ

ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ ՆՈՐՈՑԹՆԵՐՈՒ ԳԱՐՆԱՆ ԱՌԹԻՒ

	ԴՐՇ.
Գօսթիւմ թաչօր քէթէն ամէն գոյնէ	80
» » անգլ. կերպասէ	100
Հազուստներ վուալէ բէնչսէսի ձեւով	80
» բուրդ մուսլինէ » »	125
Գաշ բուսիէռ քէթէն ամէն գոյնէ	45
» » Բօբլին կերպասէ	130
Պլուզներ պաթիսթէ գունաւոր	14
» » ֆիսթոյ. և փողկապով	20
» ճերմակ վուալէ	20
» բօնժէ տանթէլով զարդարուն	30
» միմիայն տանթէլով	30
» մետաքս բէքինէ կերպասներ	54
Շրջազգեստ քէթէն վերջին նորոյթ	30
» ալբակէ սեւ և գունաւոր	60
» անգլիական կերպասէ	47
» չայազէ սեւ և գունաւոր	45
Ներքնազգեստ գծաւոր քէթէն	12
» ալբակէ ամէն գոյնէ	18

	ԴՐՇ.
Ներքնազգեստ սատտրզ կերպասէ	80
» լիպերթին կերպասէ ամէն գոյնէ	35
» պաթիսթէ տանթ. զարդարուն	15
Քօրսաժներ » »	4
Հովանոցներ կէս մետք. վերջին գոյներ	30
» ամբողջ » » »	45
» » » դեղեցիկ կոթով	50
Աղջկան հագուստներ գծաւոր քէթէն	18
» » ճերմակ պաթիսթէ	35
Տղոց » քէթէնէ	25
» » գծաւոր քէթէնէ	30
» » չայազէ ծովային ձեւ	50
» վերարկու »	30
Քօրսէներ վերջին ձեւ	27
Այրերու չապիկներ ճերմակ պաթիսթով	20
Գիլերանոցներ աղէկ խասայէ	17
Անդրավարտիկներ ֆրանսական բազէ	12
Թաշկինակներ կնոջ համար պաթիսթէ մարքայով տուզինան	22

	ԴՐՇ
Թաշկինակներ կնոջ հմ. մարքով քէթ.	50
» այրերու » » պես.	30
» » քէթէն մարքով	63
Գուլպաներ կնոջ համար մուսլինէ	8
» » » սև աղ. տես	3 1(2
» այրերու սև գունն. էն աղ. տս.	4 1(2
» » ֆիլտիքսօս բանուած	6 1(2
Զեռնոցներ կնոջ հմ. եր. ճերմ. գուն.	8
» » » » խմիթ. չուկտ	11
» » » » կէս մետաքս	10
» » արմ. մետ. սեւ և գուն.	15
Էշարբ քրիսթալին կերպասէ	15
» բօնժէ ամէն գոյնէ	18
» քրէթ տը շին ամէն գոյնէ	30
» մետք. վուալէ » »	30
Վուալէթ մուսլինէ » »	19
» չիֆոն » »	27
» քրէթ տը շին » »	40

ՆՈՐ ՃԻԻՂ
ԲՕՍԹԻՒՄ ԹԱՑԵԼՕՐՆԵՐ
Եւ հագուստներ չափու վրայ

ՆՈՐ ՃԻԻՂ
ԿՆՈՋ ԵՒ ԱՂՋԿԱՆ ԳԼԽԱՐԿՆԵՐ
Պատրաստ և չափի վրայ

10000 Է՝Ն ԱՒԵԼԻ
ՖՈՒՐԲՕՆ
ԲՈՒՐԴԷ ԵՒ ՄԵՏԱՔՍԷ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
ԲՈՒՐԴԷ ԿԵՐՊԱՄՆԵՐ ՀԱԳՈՒՍՏԻ ԵՒ ԴՕՍԹԻՒՄ ԹԱՑԵԼՕՐԻ ՀԱՄԱՐ
ՁԱՐԴԵՐ, ԿԱՌՆԻՆԵՐ, ԵԼՆ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
ԿՆՈՋ ՃԵՐՄԱԿԵՂԷՆՆԵՐ
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՑ

ՏՊԱՐԱՆ ԵՒ ՓՈՐԱԳՐԱՏՈՒՆ

Տ. ԾԻՐԻՆԵԱՆ

Պապը Ալի Ճատտէսի Ճըղալ օղլու

Եօզուչու, թիւ 10

Գործատեղւոյս մէջ կը պատրաստուին մանաւոր խնամքով պատկերներ տօսախ, ղնկօյի, պղինձի վրայ և ամէն լեզուէ կնիքներ քաուչուկի և մետաղի վրայ, ինչպէս նաեւ բժիշկներու, դպրոցներու, ատամնաբոյժերու և փոստաբաններու համար նուրբ փորագրութեամբ թաղկաներ կը պատրաստուին նաեւ խիստ ճաշակաւոր այլազարդեր, նշանախօսութեանց և հարսանեաց հրաւիրատոմսեր վաճառականական ամէն տեսակ ապագրական գիտոյքներ։ Գիները չափազանց ժամն, մաքուր և արագ, դաւառներէ ըստ լիք յանձնարարութիւններ փութով և խնամով կը պատրաստուին։

ՏՕՔԹՕՐ ՏԻԳՐԱՆ ԹԱՊՊՈՒԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄՈՐԹԱՑԻՆ ԱԽՏԵՐՈՒ

Հիւանդ կ'ընդունի ամէն օր, Շէյի, Օսման պէյի գաղինոյին մօտ, Անանեան սրարթիտանի իր յարկաբաժնին մէջ.

Արանց և կանանց ինչպէս նաեւ տղայոց ամենազգի հին և նոր ախտերը, ստամոքսի, աղիքներու, երիկամներու, սրտի եւայլն հիւանդութիւնները անգլիական և ամերիկեան նորագոյն մեթոտներով կը դարմանէ։ Ֆրանկախտը և անոր հետեւանք բոլոր յամառ հիւանդութիւնները «Սալվարսան»ի և բոլորովին նոր դրութեամբ «Սօսմին»ի ներարկումներով կը բուժէ առանց ո՛եւէ ցաւի և առանց զբաղումի արգելք ըլլալու։

Որպէս զի ո և է մէկը չի վարակուի թիֆոյով և գոլերայով, վերջերս Ամերիկայի և Անգլիոյ մէջ հնարուած, կիրարկուած և յաջողութեամբ գործածուած նորագոյն մէնոցներով պատուաստում ալ կը կատարէ։

Ուրբաթ օրեր մինչև կէս օր ձրի։

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԱՆԿԼՕ-ՀԱՅ

ՓԱՓԱԶԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ

1'136 Է.Ջ 800 ՊԱՏԿԵՐ

Արժանացած համազգային գնահատման, եզական և անմրցելի իր տեսակին մէջ անգլիերէն հոմանիշներ. գիտական բառերու ճոխ մթերք. ժամանաւոր յաւելուածներ միակ վաստակելի բառարանը. գին լաթակազմ 70, կիսաթանկ 75. դիմել հեղինակին՝ Զ. Տ. Ս. Փափազեան, Կ. Պոլիս, Պայազիտ Հաուզ։

ԳԱՂՂԻԱԿԱՆ ԱԽՏԻ ՄԷԿ ԱՆԴԱՄԷՆ ԲՈՒԺՈՒՄ

Տ. Թ. Ե. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

Բրոնֆէսաթ էրլիխի վերջին անգամ գրատած 606 Սալվարսան դեղերով կատարելագոյն կը բուժէ հին և նոր գաղիական ախտերը, միմիայն մէկ ներարկումով։ Նաև կարճ ժամանակի մէջ կը դարմանէ ցերմամիզութեան, միզամանի և երիկամունքի եւ բրօսթատի հիւանդութիւնները, ինչպէս նաև առնական անկարողութիւնն բոլորովին նոր մեթոտներով։ Իրեն դիմող հիւանդները կ'ընդունի ամէն օր իր գործատեղին, Սիրքէճի, Թրամվէյի ճամբուն վրայ Ֆէզուս լուսանկարչատան առաջին յարկը։ Մանաւ.—Ամէն տեսակ գործողութիւններ մէղոնցքի և արգանդի հիւանդութիւններու և մանաւոր խնամք։

ՎԱՃԱՌԱԿԱՆ—ԴԵՐԶԱԿ

ԵԴՈՒԱՐԴ ՏԱՆՑԻԿԵԱՆ

ՊՈԼԻՍ, ՃԷԼԱԼ ՊԷՑ ԽԱՆ, ԹԻՒ 26, ՕՌՕՉՏԻ-ՊԱՌԻ ԴԷՄԸ

Ամէն անոնք որ կ'ուզեն ճաշակաւոր հագուստ, թո՛ղ փութան դիմել Եդուարդ Տանցիկեանի գործատեղին, ուր հասած են արդէն ընտիր կերպասներ և ուր կը պատրաստուին ճաշակաւոր և անթերի հագուստներ, ամենավերջին նորաձեւութեանց համաձայն։

Առաջին այցելութիւն մը պիտի բաւ գոգոփար մը կազմել այս նոր հաստատութեան ճաշակի գերազանցութեան վրայ։

Դիմեցէք Պոյիս, Ճէլալ պէյ խան, թիւ 26։

ԳՐԱԿԱՆ ՆՈՐ ԳԻՐՔ ՄԸ

«Մանզումէ»ի նախկին խմբագիր Յակոբ Տէր-Յակոբեան հրապարակ հանած է «Ուր խեցիներ ժողվեցի» անուն գիրք մը ուր ամփոփուած են հեղինակին բազմաթիւ գրական յօդուածները,— Պատկերներ, Մտածումներ և Տպաւորութիւններ, գաղափարի և արուեստի կրնակ արժանիքներով՝ օծուն։

Տարակոյս չունինք թէ մեր ընթերցողները նոյն հաճոյքով պիտի կարդան այս գիրքը ինչ հաճոյքով որ կարդացած են եւրիտասարդ գրագէտ-հրապարակագրին բոլոր յօդուածները։

Կը ծախուի 5 դահեկանի և կը գտնուի ամէն դրավաճառի քով։

SANTAL SALOLÉ LACROIX

ԳԱԼՈՒԱԿԱՆ

Մէջբասի ախտի հիւանդները թէ՛ կանանց եւ թէ՛ տղամարդոց համար։ Մանաւանդ ֆիլտրիտի, թրիպերի, բրոնխիտի դէմ։ Ամենայն դեղատուներու մէջ։ Գրեցէք Լաքրուա էշլոնեէրին 31, Rue Philippe-de-Girard, PARIS.

ՏՔԹ. Պ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ

ՆԵՐՔԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

Արանց և կանանց ծննդամիզական և ԳԱՂՂԻԱԿԱՆ ԱԽՏԵՐՈՒ

Երկար տարիներ զանազան հիւանդանոցներու մէջ պաշտօնավարելով, իր ստացած փորձառութեամբը բժշկական նորագոյն մեթոտներով կարճ ժամանակի մէջ կը բուժէ ֆրանկախտը, ջերմամիզութիւնը, սերմնահոսութիւնը, առնական անկարողութիւնները, բրօսթաթի եւ միզամանի, ինչպէս նաև ստամոքսի, սրտի, թոքերու, աղիքներու և երիկամներու հիւանդութիւնները և զանազան յամառ վերքեր։

Բացի կիրակի, ամէն օր կէս օրէն մինչև երեկոյ կը գտնուի Սիրքէճի, Թրամվայ ճատտէսի, ղոդեկառքի ելքի դրան կիցը, իր ժամանաւոր դարմանատան մէջ։

Իսկ առաւօտէն մինչև կէս օր հիւանդ կ'ընդունի Կէտիք Փաշա, Պալի Փաշա նօթարը, Միւսէլիմ փողոց, թիւ 6 իր բնակարանը, նաև մօտակայ Վահրամ էֆ. Ամատունիի գեղարանը և ուր Զորեքշաբթի, կէս օրէ առաջ ձրի։

ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ «ՄԱՆԶՈՒՄԷ»ի

ԷՕՔՍԻԻՐԷՆԼԷՐԷ

ԳԱԹՐԱՆ ՀԱԳԳԸ ԷՔՐԷՄ

Եվրօպատան կէլէն գաթրան սուլարընին քեաֆֆէսինէ էզէր ճիհէթ միւրաճահ վէ լաթիֆ օլուպ, միյտէյի գաթիէն պօղմազ։

Մէչհուր օսմանլը վէ էճնէպի թապիպլէրին մաղհարը թագտիրի օլտուղը կիպի, էզճիմէ միհէվէզիա տոզթ. Խորասանճեան էֆենին թագտիրնամէսիյլէ բիւճհանիյէթի թասվիպ վէ Մէքթէպը Թրպպիյէի Շահանէ տախի թաստիգ էյլէմիշ տիր։ Պրիւքսել սէրկիսինտէն ալթուն վէ կիւմիւշ միտալյա նայիլ օլտուղը կիպի, Պրուսա սէրկիսինտէն տէ ալթուն միտալեյա նայիլ օլմուշ տըր։

Իյիլէճէք սու տէրունինէ պիր գահվէ գազըղը աթըլտրգտա, պուլաղը խասթալրգտան վրզայէ վէ մուհաֆազա իտէր։

Կէօյլու նէզլէլէրինէ, էօքսիրիւլէրէ, ենգիլէնցայա, պրոնչիթլէրէ, նէֆէս տարլըղընա, վէրէմին պազանկընճարընա, տէրի խասթալրգարքնա և իտրար հօլու բահաթսըզլըղընա ֆիտէպախշ տըր։

Սթամպօլտա մէչհուր տէքօ վէ էճզաճանէլէրտէ պուլունուր։

Ուսումի տէքօսը եէնի Բօսթանճէ գարշըսընտա օսմանլը էվզաֆ Թրպպիյէ տէքօսը տըր։

Սթանպօլտա ֆիյաթը 5 գրուշ տըր։